Լու առաջնոյն Տիգրանայ, որ ձեան տա-
կը մեռաւ, անդ։

Կը հաստատեն նաև Լեոնիայի Բրծ-
բունեաց և Պասենոիոն յոյն մատենագրի
գրուածքը. զորոնք Հնախօսութեան
հեղինակը յառաջ կ'բերէ. ա. հատոր.
եր. 42—44։ Բրարատեան լեռնագա-
ւառները մարդաչափ բարձրութեամբ
թանձրացած ձիւնի տակ կ'ծածկուին.
ճանապարհներն անգամ անանցանելի կը
լինին անասնոց, որոց մէջէն ճանապար-
հորդք և կարաւանը չկարողանալով ան-
ցնել, շատ անգամ բուքէն կ'խեղդուին,
ինչպես սովորաբար կ'պատահի Արևանայ
ծովի արքունի ճանապարհի վրա, որ ծո-
վի արևմտեան եզերքը պատելով մինչև
Գուգարաց նահանգը կ'հասնի. շատ ան-
գամ պատահած է որ բեռնակիր անա-
սունք մարդով մէկ տեղ հոլմակոծեալ
ձիւնը ծովը ձգած է։

Բ. յապէս են ձմեռ ժամանակ և բովան-
դակ Աիգ գաւառի Շիրակայ և Կոտա-
յից լեռնագաշտ ճանապարհները Երե-
ւանայ հիւսիսային ու արևելեան կող-
մէն. որոնք բարձր լեռներու մէջ հարթ
հաւասար գիրք ունենալով ճանապար-
հորդել չի լինիր երբէք, մինչև որ ձիւ-
նը չի խտանայ հողմոյ բռնութենէն։

Բ. յս սովորական է մեր երկրի յիշեալ
գաւառներուն, թող որ Արասեացոտն
գաւառը որ Բրարատեան դաշտին և
Բշարունեաց գաւառին սահմանակից
է և աւելի ցած, երբեմն այնքան սաստ-
կիկ ձմեռ եղած է պարսից իշխանու-
թեան ժամանակ, մինչև վայրենի գա-
զանք ուտելիք ու տեղ չգտնելով, խումբ
խումբ կ'գային գեղերը կը թափէին.
ինչ անասունքը կարծես թէ Արար-
յեցւոյ գրածը կ'ստուգեն եղել, որ
'ի թուին հայոց չե. (1056). "Անասուն-
քըն, ասէ, ջոլիր ջոլիր լինէին և թըռ-
չունքն երամ երամ 'ի փողոցս և 'ի
տունս տունս մոանէին"։

Բ. յս դէպքը լսելով Երևանայ հիւ-
սէին խանը, հրաման կ'հանէ գիւղերէն
խոտ ժողվել և տանել Արասեայ լանջին
վրա տեղ տեղ ցրուել, որ թշուառ
գազանքը կերակրին։

Շարունակելի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱՅ ԱՅՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն եր. 21)

Ա. սան զի՝ ինչպես սուրբ գրքէն ժա-
մանակագրական հաշիւները ցոյց կ'տան,
ջրհեղեղը, որ եղաւ յամի աշխարհիս
1657, որանից ետքը 'Նոյ նահապետը
ապրեցաւ այլեւս 350 տարի, իսկ կոր-
ծանումն աշտարակին եղաւ յամի աշ-
խարհի 1812, այսինքն ջրհեղեղէն 155,
ետքը. յոյժ ժամանակի Հայկ դար-
ձաւ Հայաստան. հիմա 155 տարին ևս
350. թուէն հանենք, կ'գտնենք դար-
ձեալ 195. տարի 'Նոյին ժամանակ կե-
նաց 'ի Հայաստան. որով հաւատի կ'ե-

ելի թէ՝ Հայաստան ջրհեղեղէն ետքը մինչև Ալայի վախճանը 350 տարի (յամի աշխարհի 2007) և անտի մինչև Ք. բայի տարրապաշտութեան ժամանակները՝ որ ըստ կարգի պիտի յիշենք՝ աստուածպաշտութեան մէջ էր։ Ոչքա են՝ զոր պատմաբանք իրենց պամագրութեան կարգ» գուցէ՝ աւելորդ համարել են՝ բայց մէկ ազգի սկզբնաւորութեան և նախապատվութեան համար՝ ամենահարկաւորնիւթ։

Հիմա կ՚ճանայ որ՝ խուզենք պատմաբանից խօսքերը և թէ Հայկայ աստուածպաշտութեան համար որոշ գրած են՝ թէ ո՛չ. որքան որ նորա գրելը մերժելուց և այս յայտնի կ՚իմացուի՝ որ ինքն ճըշմարիտ աստուածպաշտ՝ լով՝ չուզեց գրել ճանաչէ՝ և իբրև աստուածպաշտել կամ հնազանդել նորան. այսուամենայնիւ պատմաբաններէն ոմանք յայտնի և կ՚գրեն այս հաւաստութիւնը՝ և այս կ՚գտնենք Ալիխ յէլ Ք. սորուպատմագրութեան մէջ։

Պատմութեանց տեղեկութիւն ունեցողներին յայտնի է՝ որ յիշեալ պատմաբանը իրեն ժամանակագրական պատմութեան նիւթը քաղած է։

Նախ՝ հրէից պատմագիրներէն՝ որոնք են՝ Ք. փրիկանոս՝ Յեսու՝ Հէքսիպոս և Յովսեպոս՝ որոնք Քրիստոսէ յառաջ պատմագրեցին։

Երկրորդ՝ Լենանտ կրօնաւոր՝ Լուբիոս պամփիլեացի՝ Օսիմոս՝ Ոկրատ՝ Ամոդիորոս՝ որոնք գրեցին մինչև ցիսոքրը Ամոդոս։

Երրորդ՝ Ջորջորդ և Հինգերորդ կարգի պատմագիրներն և կ՚թողունք որոնք գրեթէ մինչև իրեն ժամանակը պատմագրեցին։ Ք. յոչափ պատմագիները հարկաւ ազգաց նախնի աստուածպաշտութեանց համար և խոյզ և խնդիր արած կ՚լինէին ուստին և կ՚քաղէ Հայկայ աստուածպաշտութեան վրա տուած իր ծանօթութիւնները բայց մեզ այս խնդրոյս հաւաստիքը յուծելու ցոյց կ՚տայ հաւատարիմ վկայ՝ որ աղբերնուս վերաբերութեամբ ոչ միայն հաւատարիմ՝ այլև գլուխ և իշխան և տեր միանգամայն Ք. բգար Ամագաւորն մեր՝ որուհամար կ՚գրէ որ Ամադէոս Ք. ռաքելոյ հրամանաւ թարգմանեց ինչպէս կ՚երևի բանի ընթացքէն՝ հրէից լեզուէ պատմաբանական գրուածները՝ յորոց յիշեալ պատմագրութիւնների հետ՝ անցից ժամանակաց թիւերը կ՚ստուգէ ինքնին պատմագիրը յասէլն՝ "Այց պարտ է հանճարեղ մտաց ոչ տկարանալ յաղագս աւելի և պակաս բերելոյն զթիւս ժամանակաց քանզի յոլով զանազանութիւնս գտանեմք յԱրթանանիցն և յայլոց թարգմանչացն գրութիւնս՝ և մանաւանդ՝ զոր Ք. բգար արքայն է թարգմանեալ հրամանաւ թադէոսի առաքելոյն. և զոր ստուգեաց Յակոբ Ուրհայեցին՝ մեծալ ընդ հրէութեամբ յաղագս կարծելոյ՝ թէ չետուն զբովանդակ գրեալս իւրեանց ճշմարտութեամբ՝ հեթանոսաց սակս նախանձու"։

Ք. արդարև ով չի կարծեր որ Ք.

գար Թագաւորը աւելի եռանդ ունե-
նար հետամուտ լինելու ստուգել 'ի
Թիւս ազգաց և մեր նախնեաց Հայկայ
աստուածպաշտութիւնը մինչև կռա-
պաշտութեան 'ի Հայաստան մտնելը Ա-
բրայի օրէն. ինքը Հայոց աստուածպաշ-
տութեան ծայրը լինելով և քրիստոնէու-
թեան անդրանիկ Թագաւոր ազգին, ա-
ւելի ևս եռանդով գտնելու հետամուտ
կ'լինէր իր ազգին նախնի աստուածպաշ-
տութեան ծայրը, և նորանով գոհ կը-
լինէր, որ իրեն ազգը սկզբէն ճշմարիտ
աստուած որ կը պաշտէր, նոյն ճշմարիտ
աստուածպաշտութեանը ինքն եղաւ ա-
ռաջնորդ։

Իսկ մեր խնդիրը այսպէս կ'լուծանէ
սոյն պատմագիր. "Իմանք ասեն զ'Ներ-
սովթ յաշտարակին անկմանէ մեռանիլ,
բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի
սպանիլ նմա 'ի Հայկայ որդւոյ Մորգո-
մայ որդւոյ Միրասայ, որդւոյ Գամիրայ
որդւոյ Յաբեթի. զի ոչ արար Հայկն ըզ-
պատկեր Ներսայ և համարեցաւ զնա աստ.
և եկն Ներսէ 'ի վերայ նորա ծանր ամ-
բոխիւ և սպան զնա Հայկ"։

Ազգային պատմիչներէն՝ այս բանիս
վկայ կ'երևին Մխիթար գոշ և Ա-
ղան բարձրբերդցի, որոնք կ'գրեն Հայ-
կայ համար, որ Ներսայ պատկերը չպաշտե-
լու համար՝ նորանից ապստամբեցաւ, և
կենաղրաւ եղաւ նորան։

Շարունակելի։

ՆԱՄԱԿԱՆԻՔ ՆԱԽՆԵԺՑ

Խաչիկ Կաթուղիկոսի առաջնոյ Կոնդակը փրկչական 976. թուին

Խաչիկ Կաթուղիկոս առաջինն է սա,
ինչպէս Կոնդակի Թուականը ցոյց 'կտայ
որ յամին 972. յեպիսկոպոսութենէ,
Ա.ղշարունեաց ընտրեցաւ կաթուղիկոս
աշխարհին ժողովով հրամանաւ երրորդն
Աշոտ Թագաւորի, Անի արքայանիստ մայ-
րաքաղաքին մէջ Յոհաննես կաթուղի-
կոսի մահուանէն ետք, որ Ա.ղթրունեաց
Ա.բուսահլ Թագաւորը աքսորեց 'ի Կո-
տորոց ասացեալ բերդը 'ի Ա.սպուրա-
կան։

Ռաբգէն զոր եպիսկոպոս կ'ձեռնադրէ
Խաչիկ Կաթուղիկոս 'Նախավկայի թեմի
վրա՝ Ա.հան կաթուղիկոսի պատմութե-
անցքէն կ'երևի, որ կուսակից էր կա-
թուղիկոսին՝ Ա.հանը 'ի կաթուղիկո-
սութենէ ձգելու ժամանակին. ուստի
երբ որ 971 թուին Յոհաննես կաթու-
ղիկոսը գնաց Ա.սպուրական բազմու-
թեամբ կրօնաւորաց, ուր փախած էր
Ա.հան, նորա հետ էր և այս Ռաբգէն
վանական կոչեցեալ Միւնեցի։

Ա.սպուրական նահանգի այն մասն
էր, ուր է Ա. Յոհաննես նախավկայի
վանքը, Միւնեաց նահանգին յարևմտից
սահմանակից լինելով, որում հաւանա-
կան է թէ աւելի ծանօթ լինէր Ռաբգէն
և վանահայր նախավկայի վանքին, յիշեալ
մասին վրա կաթուղիկոսը եպիսկոպոս կը
ձեռնադրէ զՌաբգէն իւր իշխանու-